

ցայժմ իրական թողունք մտնելը՝ նոյն իսկ համոզել փաստեր չունի, զոնե՛ ո՛չ բաւականաչափ: Իսկ փոխադական արձանագրութեանց լեզուն, որչափ մեղի ծանօթ է, շատ ալ քաջակերական չէ: Եւ Հիւրըման (անդ, Ա., 405—406) այս «Թրակեան-փոխադական» խընդրոց համար կրնար ըսել թէ «Հայերէնի Աստուգարանութիւնը լոյս մը չառնուր փոխադրէնէ»: Իրապէս՝ եթէ խիստ անունը Հերոզոտեան աւանդութիւնը՝ Հայերէնը սարգսարգս զուար պիտի ըլլար փոխադրէնի, եւ հետեւաբար ա՛յն՝ հայերէնի հնագոյն ձեւը: Այս մասին կարծենք աւելորդ է աւելի երկարել: — Ազգազրական տեսակիտով ալ՝ տարբեր խնդիր է թէ Հայոց զոնէ կարեւոր մէկ տարրը (— ըսենք «Արմէնք», թէեւ այս անունն աւելի արեւելքէ եկած պիտի ըլլայ —) չէ՞ թափառած արդեօք՝ Եւրոպայէն գալով՝ այն աշխարհաց մէջ. հետեւապէս շփուած Փոխադարձաց հետ ալ, նաեւ խառնուրդներ եղած, ազդուած՝ միով բանիւ — տարբեր՝ դարձեալ այն խնդիրը թէ «Կիմմերեան» խառնակութեանց ստեն կամ նաեւ յառաջ ու յետոյ ուրիշ տոհմերու հետ որեւէ թրակեան կամ փոխադեան տոհմ՝ չէ՞ մղուած նոյնպէս զէպ ի Եփրատէն արեւելք: Այսպէս Տոմաշէկ (էջ 40) թրակեան «Ռոտմանդ» կ'ուզէ դանել ծովական աշխարհաց մէկ անկիւնը: Այս կարգի է նաեւ «Ասկանեանց» կիճոտ խնդիրը (տես յետոյ): Բայց՝ տարբեր է Հայերը՝ Հերոզոտեան աւանդութեամբ՝ ուղղակի Փոխադարձաց մէկ մասը կարծել են: — Այս ամէնը՝ կարեւոր էր մեր խնդրոց համար, քանի որ արեւմտէ գաղթականութիւնը միայն կարեւորութիւն ունի Եփրատայ երկու ափանց հնագոյն վիճակին համար:

(Շարունակելի:)

**ՌԵՏՈՒՆԵԱՅ ԳԱՐԵՆԻ ՎԱՆՔԵՐԸ**

Վաստուրականի վանքաշատ դաւաններէն է Ռչտունեաց դաւանը\*, որ ապա կը կազմէ Ռատան-Գաւաչ եւ Կարճկան դաւանակները եւ կը տարածուի Վանայ ծովի հարաւային ափովը, երկարելով արեւելքէն զէպի արեւմուտք (Արաքս, 1898, էջ 81):

\* Աղթամարի եւ Ատաշի վանքերու մասին տեսնել Բզնունեաց ծովակի կղզիներու անապատներն ու վանքերը (Հանդ. Ամս., 1939, էջ 46—77):

Գաւաչի սահմաններն են՝ Վանայ ծովակ-Շատախ-Վանայ դաւան-Կարճկան: Իսկ Կարճկանի սահմանակից են՝ Վանայ ծովակ-Տատակի եւ Խիլդանի մասեր-Կիլգէլտերէ-Ռահվա-Գաւաչ (հմմտ. Բնաշխ. Բառարան, Ա., էջ 499. Բ., էջ 326 եւ Հայրենիք, 1887, Թ. 2250):

**1. ԱՆԾՂՆԱԳԱՍԻ ԿԱՄ ԱՆՁՆԱԳԱՍԻ ՎԱՆՔԸ**

Ձայդ անուններս ամփոփուին են Անծղն անապատ եւ Անձն անապատ բառերու: Անծղնապատ գրուած է նաեւ Անձղնապատ (հմմտ. վարը), իսկ Անձնապատ նմանապէս Յանձնապատ (Բիւզանդիոն, 1903, Թ. 2031): Ձէ կարելի ստուգութեամբ ըսել թէ՛ այս անունները միեւնոյն վանքին կը վերաբերին: Պալեան կը միտի Անձնապատ եւ Անծղնապատ իրարու հետ միացնել (Բիւզանդիոն, 1900, Թ. 1074): Նոյն վարկածն ունի նմանապէս Խ. Լեւոնեան (հմմտ. Բիւզանդիոն, 1903, Թ. 2031) եւ այն աւելի հաստատօրէն:

Վարդան Աշխարհազրի գրութեան մէջ յտակօրէն գրուած է թէ Անծղնապատ կը գտնուի Ռչտունեաց դաւանի մէջ, սակայն չէ կարելի ըսել թէ՛ այդ դաւանին ո՛ր մասին մէջ շինուած է այն: Վարդան կը գրէ՝ «Եւ յԵրզնայի տեղին կան սուրբ ուխտքն Նարեկ, սուրբ Յակովբ, սուրբ Վարդան, սուրբ Թումայի վանքն կայ մարմին սուրբ Առաքելոյն Թումայի, զոր բերին ի Հնդկաց: Եւ Աղթամար կղզին ի մէջ ծովուն, ուր կայ սուրբ ուխտն խաչն հրաշագործ, զոր շինեաց Գաղիկ թագաւորն Արծրունեաց»<sup>1</sup>: Տեղւոյ այս անորոշողութիւնն է հաւանօրէն այն կարեւոր պատճառը, որով վանքս կը նոյնացուի այլ եւ այլ վանքերու հետ: Խ. Լեւոնեան զոյն կը նոյնացնէ Կարմրակի հետ (Բիւզանդիոն, 1903, Թ. 2031 եւ հմմտ. Կարմրակի վանք): Պալեան կը կարծէ թէ նոյն ըլլայ Դիւբարոյն Ս. Յարութիւն վանքի հետ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1074, հմմտ. եւ անդ): Փիրզալիմեան, որուն հետեւորդ է եւ Պալեան, Անծղնապատի հետ կը միացնէ Նկարէնի վանքը (Նոտարք, էջ 24, հմմտ. եւ անդ):

<sup>1</sup> Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, II, էջ 428, ուր էջ 466 կ'ըսուի Ce monastère se nommait encore Անծղն անապատ: Հ. Բնձիճեան զիտել կու տայ որ՝ թէ եւ Վարդանի աշխարհազրութեան տպագրին մէջ սպառն առնուն կը յիշուի, բայց ձեռագիրներու մէջ սակաւ առնուն արուած են, այս է՝ «Աղթամարի Ս. Խաչ, Նարեկայ վանք եւ Նկարէն» (Ստորադրութիւն, էջ 178):

Սակայն ինչպէս Վարդան Աշխարհազրի յաւաքներու թեմէն տեսնուեցաւ նա Անծղնապատ եւ Նկարէն իրարմէ կ'անջատէ:

Անծղնապատի անունը ցանցառ յիշատակուած է.

Յայտմաւուրքի մը յիշատակարանին մէջ կը կարդանք՝ «Գրեալ ի թուին ՊԾԴ (1405) յանապատիս Անծղնապատ ի հայրապետութեան Տեառն Դաւթայ...»<sup>2</sup> (Նոտարք, էջ 24): Մեր Մատենադարանին Թ. 705 (Թղ. 151բ) ձեռագրին (Ոսկեփորիկ) մէջ կայ՝

«Յորժամ կարդայք զՈսկեփորիկս, Դուք յիշեցէք զԱստուածատրիկս, Որ գրեցի զսուրբ զանձիկս Հրամանաւ իմ վարդապետիս, Ի տղայութեան ժամանակիս Ի դուռն սուրբ Աստուածածնիս, Ի վանքս մեծ Անձնապատիս, Ընդ հովանեաւ սուրբ Նշանիս»: (Ոսկեան Հ. Հ., Մայր Յուլ. Վիենն. Միտիթ. Մատ., Բ. հոր. [անտիպ], էջ 247):

Ասկէ յառաջ կայ անդ՝ «Գծադրեցաւ սուրբ մատենաս ի թվականութեան Հայոց ՊԾԲ ի ցանգալի յանապատիս (անունը ջնջուած) որ յԵրզնայի յանապատիս (ջնջուած) ընդ հովանեաւ ստուածընկալ սուրբ Նշանիս ի դուռն սուրբ մաւրն լուսոյ եւ այլ սուրբ եկեղեցեաց ի հայրապետութեան Կիրակոսի...»:

Անծղնապատի միաբաններէն ծանօթ է «Երջանիկ, տօնասէր եւ աղօթարար» Յակոբ վարդապետ Ովստանացին, որ Քիւրտերէն կը նահատակուի եւ մարմինը կ'ամփոփուի «մերձ գերեզմանին Գրիգորի Նարեկայ վանք» (Թովմ. Մեծփեցի, Պոմ., էջ 43, հմմտ. նաեւ Չամչեան Հ. Մ., Պոմ. Հայոց, Գ., էջ 452. Արարատ, 1913, էջ 1158 եւ 1898, էջ 44. Հայ նոր վիճակներ, էջ 282): — Ստեփ. Անծղնապատեցին տեսնել ետքէն (Վարազ):

**2. ԱՌԲԵՐԴԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ՊԱՂՎԱՆԻՅ Ս. ՅՈՂՎԱՆԵՍԻ ՎԱՆՔԸ**

«Նարեկայ վանքի զէպ Մոզայ աշխարհատանող ճանապարհէն աջակողմն բարձրավանդակ, արձակ տափաստանի վրայ համանուն զիւղի վերեւ գտնվում է Պաղվանից Ս. Յովհաննու վանքը» (Շէրենց՝ Սրբավայրեր, հմմտ. էջ 129), որ կոչուած է նմանապէս Առբերդի կամ Յարբերդի սուրբ Աստուածածին:

<sup>2</sup> Սրտանձեանց կը հրատարակէ նոյն յիշատակարանը եւ վանքին անունը կը դնէ՝ «յանապատիս Անձնապատ» (Թորոս Աղլար, Բ., էջ 391):

Խ. Լեւոնեան զիտել կու տայ որ «Նոտարք» ի հեղինակը կը սխալի, երբ վանքս Մոզայ մէջ կը դնէ (Բիւզանդիոն, 1903, Թ. 2148 եւ Նոտարք, էջ 225, ծն. 5), սակայն կարելի է եւ Մոզայ վանք համարել քանի որ ասոր կամ անոր սահմաններն երբեմն ընդարձակուած են: Նոյնը կ'արժէ ըսել Ռչտունեաց եւ Մոզայ ուրիշ քանի մը վանքերու մասին ալ:

Եկեղեցին թէպէտ փոքր է, բայց կոկիկ չէնք մըն է եւ նուիրուած Ս. Աստուածածնի եւ Ս. Յովհաննէսի: Ընդհանրապէս մը մէջ կայ սա յիշատակարանը՝ «Ես Տէր Յովհաննէս քահանայ, որ եմ որդի Տէր Վարդան քահանայի, որ էր վանից հայր Առբերդու վանից սուրբ Աստուածածնին եւ սուրբ ժառանգեցի զհայր յետ մեռանելոյ հօրն իմոյ ժառանգեցի զհայրենի աթոռն իմ զամս երեսուն ի ՌՃԾԲ (1703) թվին նոր նորոգեցի զվանքս սրբատաշ քարամբ եւ զայս ճաշու գերբ եւ բուն մաշթոց մի առեալ եղի ի դուռն մեր հայրենի վանից Առբերդոյ: Եղեւ այս ի թվին ՌՃՀԴ (1725) ի հայրապետութեան Տեառն Գրիգորի կաթողիկոսի» (Բիւզանդիոն, 1903, Թ. 2148. հմմտ. եւ Ակիւնեան Հ. Ն. Գաւազանագիրք Կաթ. Աղթ., էջ 147): Իսկ ասկէ յառաջ Յայտմաւուրքի մը մէջ կայ՝ «Արդ գրեցաւ սա յերկիրս Մոզայ ի դեղս որ Փասա վանք կոչի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գրիգորիս եւ սուրբ Կարապետիս ձեռքերութեանս Հայոց ՋԺԵ ամին (1466)... բարեխօս լերուք առ Քրիստոս, որ պահէ զգասս քահանայից սուրբ ուխտիս Առբերդոյ վանիցս զՍաղաւոր ստացող տառիս, եւ զեւրախտաւոր վարպետն զՏէր Մկրտիչն, եւ զՏէր Կարապետն եւ զՏէր Մարտիրոսն եւ զԲարունակապետն զԿիրակոս վարդապետն եւ զՆերսէս հերպետն եւ զՍտեփաննոս ճղնաւորն եւ զՅովաննէս Բէլեցին եւ զՅովաննէս Աղթեցին եւ զՏէր Աւետիսն, եւ զՏէր Մարտիրոսն եւ զԱստուածատուր սարկաւազն...» (Նոտարք, էջ 225, ուր «Առբերդոյ վանիցս» ի համար կ'ըսուի՝ «Թերեւս վանքն Ակնդաշտայ կամի ահնարկել որ է ի մերձակայս Փեասովանք գեղջն», ծն. 2):

Բզնունեաց ծովի եզերքը, Հալուարար գաշտակի քով, Մանաղկերտ եւ Գանձակ գիւղերու միջև:

**3. ԱՐԾՈՒԱՐԵՐ ԿԱՄ ԱՐԾԸՐՈՒՆՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ**

Բզնունեաց ծովի եզերքը, Հալուարար գաշտակի քով, Մանաղկերտ եւ Գանձակ գիւղերու միջև:

<sup>3</sup> Համանուն՝ այս է Արծուարեր Ս. Աստուածածին վանք մըն ալ կայ Արճէլի մէջ, տեսնել սպա: 2

53-66









և ծնող եւ դայեակ, խնամիչ եւ դարմանիչ, սնուցանող եւ սիրովիչ սուրբ Յակոբայ միաբանիցս, իբր զգործվագութ ծնող զաւակաց իւրոց: Վասն զի յաւուրս սորա եւ մեր բազում վրդովմունք եղեւ աշխարհիս մերոյ եւ էառ անիծեալն Սքանդար զաշխարհս մեր եւ զանաորիկ բերդորայքս Քրդստանաց, զՎան եւ զՈստան եւ զայլսն ամենայն ի ձեռաց բնիկ պարոնանց մերոց եւ անցոյց գոունն Շամօանից եւ մնաց երկիրս շատ աւերակ:

Ի ՊՂԳ (1425) թուին էառ զՎան: Եւ ի ՊՁ (1431) թուականին էառ Փերբէկն զԱղթամար կղզին եւ անպատմելի արամութիւն հէաս աշխարհիս եւ աղբիս Հայոց եւ երկիրս աւերակ մնաց երկու տարի: Եւ յՊՁԳ (1435) թուականին Շահուսէն ի դուրս եկն եւ Սքանդարն փախեալ եւ երկիրս սասանեալ կայր եւ զՁՏանէն եղիւր պարոն Շահուսէն եւ ապա խաղաղացաւ երկիրս: Եւ յՊՁԸ (1439) թուին զողացան զԼուսաւորչի Աջն ի Սիս եւ առին Վրացիքն զԳողգոթայ ի Հայոցս եւ հուր անկաւ յերկնից ի Մըմրուտ սարն եւ շատ տարի այրեց զայն սարերն: Եւ յՊՂ (1441) թուին յէջմիածին կաթողիկոս նստուցին: Եւ յայս ամենայն նեղութիւնքս եւ ի հալածանքս՝ հեղահողի եւ աստուածարան վարդապետն Սիմէոն զուրբ Յակոբայ միաբանքս իբր զղորովագութ ծնող պահեաց զոտոս յայլ եւ այլ տեղիս շրջելով ի հոգեւորսն խրատելով եւ զմարմնաւոր զպէտան լիակատար պատրաստելով: Սա ստացաւ եւ բազում մուրք եւ արտորայք, այգի եւ ծառատունկիք վանիցս, զոր ինքեամբ զնեաց տրօք քրիստոնէից եւ զոր յորդորեալ զքրիստոնեայս, զբահանայ եւ զաշխարհականս ետ նոցա զնել ի հալալ արգեանց իւրեանց մուրք եւ անդաստանս վանիցս, որոց տացէ... Քրիստոս Աստուած ընդ միոյն հարիւրապատիկ:

Եւ արդ ասորիկ են նոր տուած եւ արծաթագին մուրք վանացս: Ձինչ որ բնական մուրք է վանացս՝ թէ կազամախի պրակն եւ թէ արտ եւ թէ ախն, որքան եւ է ի Ընծաբու զաշտս յայտնի է ամենեցուն: Եւ երկու արտ ի Շաավան եւ ծառ ի Գանձակ եւ երկու արտ ի Դեղձիան: Եւ հինգ արտ եւ Սաղաթիկէլ երիցանց աղոյ կէսն ի Մոխրաբերդ: Եւ Օմար Շամշանի բաժին հոգն ժԳ արտ եւ խառնն եւ փաղախն եւ կախն եւ Մանդուկանց Ամիրպէկի այգին ծառերովն ի Մոխրաբերդն: Սորա ամենեքեան Սիմէոն վարդապետին արծաթագին մուրքն են վանացս, զոր ստացաւ տրօքն քրիստոնէից եւ յորդորեաց վարդա-

պետական քարոզութեամբ զայլս ոմանս ստանալ ընչիւք իւրեանց եւ նուիրել մուրք եւ սխալ սուրբ Յակոբայ վանացս: Եւ երկու արտ ի Նարեկ եւ մէկ արտ ի Բախվանց, զարձեալ աղաչեմ յիշել ի Քրիստոս զլերթահատոր հարազատքս մեր, զսրբակրօն արեղայքս որք վայելողք են այս տառիս՝ եւ սպասաւորք սուրբ տաճարիս. զՊողոսենց Կիրակոսն, եւ զԳաւաչեցի Ստեփաննոսն, զԿիրակոս եւ զՄկրտիչ Մանդասիքն, զՍարգիս եւ զԿիրակոսն, զՀայրապետ եւ զերկու թումայն եւ զԱռաքելն եւ լի բերանով... Աստուած ողորմի ասել:

Ուրիշ գրչի մը յաւելումն. «Յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ տանուտէրն զԳուրգղիքն եւ զամենայն արդականս իւր, որ ետ վերստին նորոգել զՄաշտոց զիրքս եւ ետ ի դուռն սուրբ Յակոբայ տաճարին ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Ստեփաննոս կախկոպոսին եւ այլ կրօնաւորացն տէր Գրիգորին, տէր Մարտիրոսին, տէր Մովսէսին, Յովաննէսին, տէր Վարդանին, որ բազում աշխատեն ի դուռն սուրբ Յակոբայ տաճարին. Աստուած ողորմի ասացէք Ստեփաննոս կախկոպոսին, որ զպարխախն եւ զաներն նորոգեաց եւ զչորս եկեղեցիք սալայատակ արար»: (Հրտ. Աղայեանց, Դիւան Հայոց պատմութեան, զիրք Ժ., Թիֆլիզ 1912, էջ 7—12. հմմտ. եւ Նօտարք, էջ 41, 87, 136—139:)

Այս պատմութիւնէն յառաջ թումայ յառաջարան մը կամ նախարան մը գրած է զոր յառաջ կը բերենք, վասն զի անոր մէջ Ս. Յակոբայ մասին տեղեկութիւններ կան (հմմտ. Դիւան, Ժ., էջ 5—6 եւ Նօտարք, էջ 136):

«Փառք եւ պատիւ... զոր տեսեալ զսորայս զհոգեւոր փարթեամբիւնս սրբատէր կրօնաւորն Յոհաննէս ի գեղջէն Գաւաչից ըստ նախնեաց Բժոնց կոչեցեալ: Եւ նուիրեաց զսա ընծայ սուրբ տաճարիս, որ է շինեալ գումբէթաձեւ եւ երկնաման ի գերահռչակ ուխտս եւ ի հրեշտակարնակ կրօնաստանս որ կոչի սուրբ Յակոբ: Չոր շինեալ է յառաջին թաղաւորացն Հայոց ի գլուխ երկրիս Ընդտունեաց յարեւմտից կուսէ առաջի Կապոս կողան բերդին ի պահպանութիւն աշխարհիս Հայոց...: Ստացող սուրբ կտակիս ընծայեաց զսա սուրբ Յակոբայ գերահռչակ տաճարիս, յիշատակ հոգւոյ իւրոց եւ ծնողացն իւրոց Բաղդասարիս եւ Շնոհվորին... եւ եղբորն իւրոց թումային... որ յաւուրս ձմերայնոց ի բքաբեր ուսի անկեալ մեռանի

յերկիրն Կեցնայ...: Եւ արդ ես փծունս ի գրչաց... Մինասենց թումայ եղկելի հոգիս...: Եւ ի սիրոյ եւ ի հարկեցուցիչ հրաժանէ սրբազան անձինն եւ աստուածարան վարդապետին Սիմէոնի առաջնորդին եւ շինողին սուրբ Յակոբայ գերահռչակ ուխտին, որ յորդորեաց զՅոհաննէս ի բարին. յաղթեցայ եւ ես... կատարեցի զսա յաստուածախնամ կղզիս Աղթամար ընդ հովանեալ գմբէթաձեւ եւ երկնաման տաճարիս... ի թուականութեան հայկազեան տօմարիս ՊՂԳ (1445) ի յամսեանն Մարերի յինն աւուր շարթու զծաղրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ տառս այս»:

Անցնինք միւս յիշատակագրութիւններու: 1415ին «ընծայ ի դուռն սուրբ Յակոբայ» կը տրուի Յայրամուրք մը (Նօտարք, էջ 45): Երկու տարի վերջ կ'աւարտի Քարողգիւրք մը «ի մեծ եւ հռչակաւոր սուրբ ուխտս Ս. Յակոբայ ընդ հովանեալ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Յակոբայ հայրապետիս եւ սուրբ Երից Մանկանց» Աստուածատուր գրչի ձեռքով (Նօտարք, էջ 53):

Սիմէոնի մասին, որ Ստեփանոսի յաջորդ կ'ըլլայ (հմմտ. առջեւ Մինասենցի գրութիւնը) կայ սա կարեւոր յիշատակարանը (եւ այն իրմէն). «Ի վերջին դարն ժամանակին յորժամ սէրն ցամաքին եւ աշխարհ մեղաւք տապալին, մարդկան յոյսն պակասին եւ սատանայի կամքն լինին եւ տեսիլ սին եւ սատանայի կամքն լինին եւ տեսիլ սին Սահակի ի մեղ կատարի, ես վերջապրոյն Սահակի ի մեղ կատարի, ես վերջացեալս ի էն սուտանուն Սիմէոն աշակերտն շանկացող եղա Աստուածաշունչ զրիս ի թվ. Հայոց Պ(2?) 1431, ի սուրբ յանապատիս որ սուրբ Յակոբն յորժորջէ ի շնորհազարդ վարդապետն Ստեփաննոս որ էր ի յերկրէն Գաւաչից ի յորդոյ թումայէ ի Պաւղոս(ի) թոռնէն, զի նա առաքելոցն նմանեալ... եւ զաւետարանս է ինձ տուեալ եւ ժԲ Փլաւրին գին է առեալ եւ իմ ել ճար չիմացեալ մինչ զսա բարեխօս կալեալ զի խիտ եմ մեղաւք լցեալ եւ սատանի բաժին եղեալ ի յանապատէ եմ հեռացեալ եւ յաշխարհ ի փոյոց մտեալ. զի իմ մեղքն բազմացեալ եւ զանապատներն աւերեալ: Արդ որք հանդիպիք այս սուրբ աստուածաշնչիս զիս յիշեցէք զՍիմէոն վարդապետս...» (Macler, Rapp. sur une miss. scient. en Belgique, էջ 114—115):

Հայրապետ 1446ին կը գրէ աւետարան մը, որ ընծայ կը տրուի Ս. Յակոբայ: Յիշա-

տակարանին մէջ կ'ըսուի «է հռչակաւոր եւ հրեշտակարնակ կրօնաստան» (Դիւան, Ժ., էջ 14 եւ Նօտարք, էջ 153 եւ Լալայեանց, Յուց. հայ. ձեռ. Վասպ., էջ 398): Իսկ 1448ին Առաքել Սիմէոնի առաջնորդութեան Նօտարք, էջ 155. Լալայեանց, Յուց. հայ. ձեռ. Վասպ., էջ 400): Քանի մը տարի վերջ 1458ին թումայ կրօնաւորը Գանձարան մը կը նուիրէ (Նօտարք, էջ 189):

Ատոմ կամ Ադամ Բ. կաթողիկոսի ժամանակ (1496—1509) Ս. Յակոբայ վանքը Աղթամարի իրաւասութեանէ ինքզինքը կ'ազատէ եւ էջմիածնի կը հպատակի (Բիւզանդիոն, 1900, Թ. 1197):

Սիմէոն կաթողիկոսի օրով վանքիս առաջնորդն էր Հայրապետ (Դիւան, Գ., էջ 596):

Ս. Յակոբայ վերջին վանհայրներէն ծանօթ են՝ Արքահամ Մոկացի (Նօտարք, էջ 128, 189), Ներսէս Մոխրաբերդցի, որ նուազ ջանք չի թափեր վանքը զարգացնելու (Հայրենիք, 1887, Թ. 2256) եւ Ստեփաննոս Սարգիսեան (Միւրախորեան, Ուղեւորութիւն, Ա., էջ 107):

Ս. Յակոբայ վանքն<sup>20</sup> ունեցած է բաւական հարստութիւն եւ աւերումի ենթարկուած (Շէրենց, Սրբաւայրեր, էջ 124):

13. Ս. ԿՈՐԱՊԵՏԻ (ԳՍՆՁԳՍ) ՎԱՆՔԸ  
Գանձակայ վանքերէն է Ս. Կարապետ<sup>21</sup>:

Գաւաչ դաւառին հիւսիս-արեւմտեան վերջին ծայրը, զէպի Բաղէշ տանող ճամբու աջ կողմին շինուած է Գանձակի Ս. Կարապետը, որ ապաստան եղած է բուք ու բորանի բոնուող ճամբորդներու: Ունի սղիտակաչէն զմբէթ եւ մինչեւ 1896ի զէպերը չէն ու շող էր ամուր եւ հոյակապ շէնքերով, սակայն այդ առնանքը կողոպտուեցաւ ու ամայի դարձաւ (Շէրենց, Սրբաւայրեր, էջ 130—131):

<sup>20</sup> Վանքիս նկատմամբ գրած են դեռ՝ Ինձիբեան, Ստորագրութիւն, էջ 165—167. Նոյնը՝ Նոր Հայաստան, էջ 147. Շէրենց, Սրբաւայրեր, էջ 124. Սրբանձականց, Համով Հոտով, էջ 39. Բիւզանդիոն, 1903, Թ. 2148. Արեւելք, 1887, Թ. 957. Մասիս, 1867, Թ. 813:

<sup>21</sup> Հմմտ. Լուսապտուղ Ս. Սահակ:

14. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ (ՍՈՐԲԱՅ) ՎԱՆՔԸ

Կարճկանի մօտ՝ Սպակերտի Սորբ կամ Սորբի զիւղի<sup>22</sup> արեւելեան կողմը, Վանայ ծովու արեւմտեան հարաւային եզերքը չինուած է Սորբայ Ս. Կարապետի վանքը, որ զիւղէն կէս ժամ հեռու է: Ունի ստուգիւ կախարդիչ տեսարան: Իր առջեւը կը տարածուին Վանայ ծովն իր ամբողջութեամբը եւ Բզնունեաց ու Խոտիսոունեաց, Արծկէի ու Քաջբերունեաց գաւառներն իրենց զիւթիչ գեղեցկութեամբը: Ծովէն գրեթէ հարիւր սոք բարձրութիւն ունեցող վայրի մը վրայ կառուցուած է վանքին քարաշէն տաճարը, որ ունի գեղեցիկ դմբէթ եւ նման է Պոսի Ս. Նարեկայ վանքին: Կը պատմուի թէ՛ բացի տաճարէն հօն եղած են ուրիշ շատ կանոնաւոր եւ գեղեցկակերտ շէնքեր, որոնք սակայն ապա քառս մը կը յիշեցնեն իրենց խառնակութեամբը (Հայրենիք, 1887, Թ. 2253 [Ղ. Նահապետեան] Արեւելք, 1887, Թ. 940, 1890, Թ. 1944-1901, Թ. 4716. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 162. Սրուանձտեանց, Համով Հոտով, էջ 131): Հ. Սարգիսեան կը գրէ՝ «Իրեւ բառորդաւ հեռի ի գեղջէն յայնկոյս ծովեզրին որոյ քարաժայռ կապան՝ հետգհեաէ բարձրանայ ի վեր, անդ ի վերայ մեծի բարձրամանդակին կառուցեալ կայ մեհաստան յանուն սրբոյն Կարապետի, զբիւքն գուարճալի եւ վսեմ եւ ծովահայեաց: Չունիմ ասել որպիսի ոք էր շինող նորա եւ զինչպիսի նորա ախորժակ, որ ընդ վսեմատես վայրացն չկարաց միաբանել զշինուածն իւրթին եւ մթին եւ զամենեւին անշուքն: Թէպէտ եւ մարթի ասել գեղատեսիլ լեալ գառալին հիմնարկեալն, մինչդեռ չէն էր երկիրն առ Արժրունի թագաւորօք, այլ յետ աւերելոյ երկրին եւ բռնանալոյ Քրդաց յայդ իւրթութիւն սահմանեցին զմենաստանն, զի մի գոնեայ անհետ լիցին սուրբ վայրքն (Տեղագրութիւնք, էջ 251): Ապա Հ. Սարգիսեան կը հաղորդէ թէ՛ այլազգի բռնաւոր մը կը յափշտակէ վանքին արտորայները, բայց սքանչելի տեսիլէ մը «գարհուրեալ յետս դարձուցանէ ոչ միայն զոր անն՝ այլ եւ զիւրն ամենայն (անդ, էջ 251. հմմտ. Հայրենիք, 1887, Թ. 2253, Մար Իպրահիմի գէպքը):

Սորբայ Ս. Կարապետի վանքն ալ, ինչպէս ուրիշ շատ մը վանքեր, ունի իր կոն-

դակն<sup>23</sup>, որմէ կը քաղենք՝ «Եւ ընդ աստուածապարգեւ շնորհադեղուն օրհնութեան նամակիս՝ ծանիք ով բարեպաշտօն սիրելիք մեր ի Տէր, զի յաղագս մեծահարաշ սրբոյ ուխտին սրբոյն Յովհաննու Կարապետին ծանուցից ձեզ...: Յետ անտանելի չարչարանաց սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին... դնաց սուրբ հայրն մեր Լուսաւորիչ ի Կեսարիա առ Ս. Աւետիք պատրիարքն... եւ նա ետ նմա պարգեւ զգանձն անդին սրբոյ Կարապետին, զոր առեալ երբ եւ եդ ի Տարօն ի պահպանութիւն երկրիս Հայոց եւ ունելով ընդ իւր զճկոյթն սրբոյ Կարապետին յուղի անկեալ եկն ի դնալ ի լեառն Վարադայ...: Եւ օթեւանեցաւ զիշերն ի տեղի սրբոյ վանիցս եւ տեսեալ սրբոյս գտեղին ծովահայեաց եւ վայելուչ, հաճեցաւ շինել փոքր տաճար մի յանուն սրբոյ Կարապետին եւ եդ անդ զգերասքանչ սուրբ ճկոյթն մեծի Ամլորդոյն եւ զինի ժամանակաց լուեալ բարեպաշտ իշխանին Վասիլի, որ տիրէր զբերդն Վան քաղաքին, ուստի ընդարձակեալ մեծացուց զվանք դայս եւ արար տեղի միաբանից, յաշխարհ(հ)է հրաժարեալ եղբարց, զի անդ բնակեալ աղօթեացեան վասն աշխարհի խաղաղութեան: Բայց վերջապէս ի բառնալ թաղուորութեան Հայոց եւ անկանել ի ներքոյ հարկատուութեան այլազգեաց, Մար մի Իպրահիմ անուն եղեւ տիրող զիւղին Սորբայ եւ տամբն իւրով եկեալ նստան անդ եւ նախանձեալ մախացաւ ընդ սուրբ վանիցս եւ բազում փնասս հասոյց նմա: Տիրեալ զարտօրեսպան ամենայն եւ միանգամայն իւրացուց զվանքն ի վարել եւ ի ցանել եւ ի հնձել, մինչ զի միաբանքն սրբոյ ուխտին կամէին ցիր եւ ցան լինել ի յերկիւղի ամբարիշտ Մարին այնմիկ: Սակայն հոգեշնորհ առաջնորդն վանուցս դանձատող Գրիգոր վարդապետն, որ յետոյ նստաւ յԱղթամար կաթողիկոս, ի տարակուսի եղեալ էառ զբոլոր միաբանսն եւ մտին ի հրաշալի տաճարն սրբոյ Կարապետի, մեծաւ արտասուօք հսկում արարին, զՏիրամայր սուրբ Աստուածածին եւ զսուրբ Կարապետն լալօք եւ արտասուօք բարեխօս ըմբռնեցին եւ խնդրեցին ինքեանց ազատութիւն: Եւ զինի քանի աւուրց անցման Եհաս ի վերայ նորա աստուածատուր բարկութիւնն: Ամբարիշտ Մարն այն տամբ իւրով բորոտեալ եւ հարեալ ի զանպան ցաւս անբուժելիս եւ սատակեցան եօթն

<sup>23</sup> Դժբախտաբար կանգակին զրութեան թուականը եղծուած է, սակայն բովանդակութենէն զատելով հին չէ:

<sup>22</sup> Սորբ ունէր երկու եկեղեցի՝ Ս. Ստեփանոս եւ Ս. Սկասաակ: Ասիկ էր Ստեփանոս վկան (Նօտարք, էջ 74-75): — Սպակերտի միւս վանքերու մասին ետքէն:

եղբարքն հանդերձ ամենայն ընտանեօքն զրաւեցան ի կենաց: Եւ մնաց մի եղբայրն Եուսուֆ անուն եւ տեսանելով նորա գհրաշաղործութիւն սրբոյ Կարապետին եւ զճացեալ յանօրէն զործոց իւրոց եւ առեալ զերկուս լուծս եղանցն զիմեաց լալով եւ արտասուօք ի դուռն վանից եւ զամենայն արտօրոյսն, զոր բնութեամբ տիրեալ էին յետս դարձուց եւ յետ որոց խոստացաւ հաստատուն պայտանաւ երկու լիտր ձէթ տալ սրբոյ վանիցն յաղղէ յաղղ...: Նաեւ գիտութիւն լինիցի ազգայնացող զի ի մէջ Սորբ զիւղիս վարժարան չգոլով զաւակունք զիւղացուցս մնացեալ կային առանց ուսման եւ զբականութեան հայկական լեզուին...: Կառուցաք վարժարան մի յանուն սրբոյ Մանկանց քոռասնից եւ ժողովեցաք մանկունս աւելի քան զեօթանասուն եւ սկսաք վարժել զնոսա» (Հայրենիք, 1887, Թ. 2253):

Արդ կոնդակիս աւանդութեան համեմատ վանքիս հիմնադիրն է Մ. Գրիգոր Լուսաւորիչ, որ հօն կը գետեղէ Ս. Կարապետի ճկոյթը եւ սակայն այսքան հին վանքի մը ճկոյթը կը մնայ անձանօթ: Այս լուսաւորութիւնը կը մնայ անձանօթ: Այս լուսաւորչաւն համարելու չէ: Հաղիւ ու լուսաւորչաւն համարելու չէ: Հաղիւ 1503ին Մատթէոս կը գրէ աւետարան մը «Ես յետինս ի գրչաց եւ սուտանուն ի կարգաւորաց... յանձն առի եւ կատարեցի ի Սորբայ վանքս ի դուռն շնորհալի սուրբ Կարապետաջնորդութեանս հեղահոյի տէր Խէրապետաջնորդութեանս արար ի հետ տիս, զի լաւ ընդունելութիւն արար ի հետ մեզ» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասուլ, էջ 615/16, — Սարգիս Սորբեցիի մասին տես թ. Մեծօրիցի, Պոսմ., էջ 35):

Վանահայրներէն եղած է նաեւ Աթանաս վարդապետ (Արեւելք, 1884, Թ. 214 եւ 1887, Թ. 940):

Չէ ունեցած վանքս զիւղական թէ՛մ, բայց նուէր ստացած է առատ արտ ու անտատ թարկուած մահմետականներէ<sup>24</sup>: Անինամ ձգուած է (հմմտ. Շէրենց, Սրբավայրեր, էջ 152-153), թէ՛ եւ Աղթամարի հոգածութեան յանձնուած էր:

<sup>24</sup> 1896ին կը կողոպտուի եւ վանահօր լեզուն կը կարուի (Արտարատ, 1896, էջ 88 եւ 248):

15. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

Ռշտունեաց գաւառին մէջ կը դնէ վանքս Լալայեանց եւ կը հաղորդէ թէ՛ հօն պահուած է եղեր Ս. Նշանի մասունք մը, որուն շնորհիւ հարուստ Պետրոսի մեռած գաւաղը յարութիւն՝ կ'առնու եւ կը կոչուի Մեռել-յարոյց Ս. Նշան: Այժմ վանքն աւերակ է, յարոյց Ս. Նշան: Այժմ վանքն աւերակ է, իսկ մասունքը ամփոփուած է Մոխրաբերդի եկեղեցու մէջ (Ազգ. Հանդ., 1916, էջ 208): Արդեօք ա՞յս կ'ակնարկէ Պալեան, երբ կը գրէ թէ՛ Վանայ Մանազկերտ քաղաքին հարաւային-արեւմտեան կողմ կան երկու երեք եկեղեցիներ, որոնց համար աւանդութիւնը կ'ըսէ թէ՛ վանք են եղեր (Բիւզանդիոն, 1900, Թ. 1127):

Տեսնել յաջորդ վանքը՝ Կարմրակ:

16. ԿԱՐՄՐԱԿ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿԱՄ ՄՈՒՆՁՆ ԿԱՄ ԱՆՆԻ ՎԱՆՔԸ

Շինուած է Վանայ ծովու հարաւային արեւելեան կողմը ծառախիտ ձորակի մը մէջ: Տաճարն ունի զոյգ խորան եւ թրճուած աղիւս կառուցուած բարձր դմբէթ մը: Տաճարին կամարները խաշածեւ են (Նահապետեան, Հայրենիք, 1887, Թ. 2258, պատկերը Բնաշխ. Բառարան, Բ., էջ 333):

«Կարմրակ» կոչուած է՝ «Ձի է անդ մասն ի կենաց փայտէն ամփոփեալ ի տիւի եւ ի վեհալ կարմրագոյն» (Սարգիսեան, Տեղաբայ ակն կարմրագոյն» (Սարգիսեան, Տեղաբայ գրութիւնք, էջ 252 եւ Բազմավէպ, 1897, էջ 412): Եւ կամ Կարմրակ զիւղին մերձ ըլլալուն համար:

Հ. Սարգիսեան կը հաղորդէ՝ «Առ նախնեօք մենաստանս այս Միանձն յորժորջէր եւ միաբանիցն բազմութիւնն էր իրբեւ երեք հարիւրոց յորժամ չէն էր երկիրն եւ պատկառելի առ ամենեսեան վասն մասին փայտին կենաց (Անդ, էջ 252):

Վանքս յորժորջուած է նմանապէս Անէն՝ «Գիրքս յիշատակ է տէր Գրիգորին ի վանքն որ Անէն անապատ ասի ի դուռն Կարմիրակ Ս. Նշանին, որ ի յերկիրս որ... Գաւառ... ասեն...: Չեռամբ Սահակ արեղայի զրեցաւ ի Վարագ...: Գիրքս յիշատակ է Տէր Գրիգորին ի սուրբ ուխտն որ Անէն անապատ ասի ի դուռն սուրբ Նշանին որ Կարմիրակ ասի... ՌՂԳ. (1644) թուին զրեցաւ ի Վարագ» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասուլ, էջ 46):

Վանքիս հիմնադիրը կը գրուի Գաղիկ թագաւորը, որ կը պատմուի թէ՛ զարնան երեք ամիսները իր կողակցին հետ հօս աղօ-



և Անանիա Նարեկացի<sup>31</sup> — դժբախտաբար անգիր ու հասարակ տապանաքարերով ծածկուած: Ժամատան վրայ գրուած է՝ «ԹՎ. ՌՄԼԶ (1787) Տէր Բարսեղ վարդապետ, որ շինեաց զգարպատս» (Արեւելք, 1903, թ. 5412):

Չանդակատունը վերջին ժամանակներու գործ է և շինուած է սրբատաշ քարերով: Ճակտին վրայ արձանագրուած է՝

«Չքնաղ դումբէթս քաղցրագունդ  
Կերտեալ նորոգ հաստատուն,  
Եւ դէտ նորին Յարութիւն  
Մտօք բարի եւ արթուն  
Բնիկ յերկէն Տարօնուն  
Ծառայ սրբոյ Ամլորդուն  
ԹՎ. ՌՄԿԱ. (1812)»:

(Ազգր. Հանդ., 1911, էջ 38—41, ուր եւ վանքին ուրուակիծը, իսկ պատկերը տեսնելի մէջ այլոց Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, էջ 250 եւ Գեղունի, 1904, էջ 50):

Յետոյ դմբէթները կը նորոգեն Մովսէս եւ Սահրատ ինչպէս արձանագրութիւնս կը ցուցնէ՝ «Ես Բաղիշեցի քարգալ եւ տիրացու Մովսէս եւ իմ հայր մէծար պաշի Սահրատ նորոգեցաք զգումբէթներս թՎ. ՌՄԳԲ. 1843 (Բիւզանդիոն, 1903, թ. 2031 եւ Նօտարք, էջ 230, ծն. 3)»:

Բուն տաճարին հարաւային պատին արեւելեան անկիւնը կայ սա արձանագրութիւնը՝ «(Յորժամ) ... նորոգեցաւ տաճարս Գրեգոր կաթողիկոս յԱղթամար Գաւաչցին էր, Աղէքսանդր կաթողիկոս էջմիածին էր, Օսման բէկ պարոն էր Ոստան, Ղատր աղէն աղա էր վանից, Յովհաննէս վանից Հայր էր... մտաւ անօրէն Բ. հաղար դրուչ խարջ առաւ, նորոգեց Գ. տաճար, այս Գ. տաճար յիշատակ է Յովհաննէսին եւ իւր ծնողաց Մուղսի Ստրաչցին, մօրն Շահմէլ բէկին եւ կողակցուն եւ Գ. սրբոց, որ ընթեռնուք Աստուած ողորմի ասացէք թՎ. ՌՃԾԶ (1707, Բիւզանդիոն, 1903, թ. 2031):

<sup>31</sup> Ինճիճեան ուշագիր կ'ընէ որ վարդան Աշխարհադրի քանի մը օրինակներու համեմատ Նարեկացի մէջ եւ Ս. Թովմասի նշխարները եւ Ս. Յակոբի ձեռնյոթը (Ստորագրութիւն, էջ 172):  
<sup>32</sup> Անդ. Ս. Լեւոնեան կը հրատարակէ եւ ուրիշ արձանագրութիւն մը որ գմբէթին վրայ է եւ է՝ «Ես տէր Արքայամ որ ձեռնադրեցի Յովհաննէս կաթողիկոս (Աղթամարայ) թՎ. ՌՄԳ» (1841):

Նարեկայ վանքի շինութեան առիթ ու պատճառ եղած են հալածանքներ: Փոքր Հայքի մէջ բնակող հայ կրօնաւորները Յոյներէն իրենց կրօնական համոզումներուն համար հալածուելով Ժ. դարուն կու դան Հայաստան եւ հոն քանի մը վանք հիմնելով կը բնակին անոնց մէջ: Այս վանքերէն մէկն ալ է Նարեկ<sup>33</sup> գիւղի մէջ հիմնուած վանքը, որ գիւղին անունովը դարէ դար այդպէս կոչուած է, մինչ իսկական անունը ինչպէս կը թուի եղած ըլլալու է՝ Ս. Սանդուխտ կամ Գրուց:

Ապա ի պատիւ իր հռչակաւոր խորախորհուրդ մատենագրին կոչուեր է նմանապէս Գրեգոր Նարեկացոյ վանք<sup>34</sup>:

Ասողիկ վանքին հիմնարկութեան<sup>35</sup> մասին սա տողերն ունի՝ «Այսպէս եւ յայտմ ժամանակիս շինեցաւ Նարեկ յԼուսուսեաց դաւառին նոյն կարգաւորութեամբ բարձրարդ, պաշտօնապայծառ երգեցողովք եւ զբաղան գիտողօք» (Պտմ., էջ 174. հրտ. Բեաեբրուրդ 1885): «Նոյն կարգաւորութեամբ» բառերը կը նշանակեն թէ Նարեկի մէջ ալ այն կարգ ու կանոնը կար, որ կը տիրէր Կարմրջաձորի եւ Հոռոմոսի վանքերու մէջ (հմմտ. նաեւ Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 171, ծն. 3):

Նարեկի մէջ փայլած է Անանիա մեծ փիլիսոփան, որ եւ «վանական Նարեկայ» (Ասողիկ, էջ 178) եւ «Նարեկայ վանուց ստալնորդ» (Տաշեան, Մայր Յուցակ, էջ 77), որ հոն ալ թաղուած է<sup>36</sup>: Սակայն անոր զարդն ու պսակն է «Նարեկ» Աղթամատոյցի մեծ հեղինակը Ս. Գրեգոր Նարեկացի, որ ապրած է սրբութեամբ, խորհած ծանրութեամբ, զրած իմաստութեամբ եւ մեռած սուրբի

<sup>33</sup> Նարեկ այս է պղտիկ Նար կամ գուցէ Նարեկ — Նարեկ եկեղեցուրք (Բիւզանդիոն, 1903, թ. 2031): — Աղթամարի շինութեան անմիջապէս վերջ կը շինուի զրուց (զուրսի) անուն վանքը: Այս վանքը վերջէն Նարեկ կ'անուանուի, որովհետեւ Ս. Գրեգոր Նարեկացին, որ յառաջ հեռուոր Նար գիւղէն էր, իր ազգատոհմով այս վանքին մէջ կու գայ հաստատուելու, որով վանքը կը կոչուի Նարեկ, որ կը նշանակէ Նարեկեք (Նարէն եկածներ կամ Նարեցի), որովհետեւ եկ' ցի մասնիկին իբր հոմանիշ տեղերու անուններուն կցուելով նոյն տեղացի կամ երկրացի նշանակութիւն տուած ըլլալու է երբեմն իր յարակից անուններուն: Ս. Գրեգորի գրութիւն յիշեալ Նար գիւղի մէջ թաղուած է, եւ ուխտատեղի է (Բիւզանդիոն, 1900, թ. 1191, Ս. Լեւոնեան):

<sup>34</sup> Աւանդութիւն մը զԳրեգոր կը ճանչնայ նոյն վանքի հիմնադիրը (Արեւելք, 1893, թ. 2758):  
<sup>35</sup> Saint-Martin վանքիս հիմնարկութիւնը կը գնէ 935ին (Mémories... sur l'Arménie, II, էջ 466):  
<sup>36</sup> Հոն ապրած է նմանապէս Ս. Գրեգի մեկնիչ Պետրոս Վրդ. հմմտ. Չամչեան, Պտմ. Հայոց, Բ., էջ 824):

համբաւով<sup>37</sup> եւ իր մասին հիւսել տուած բարեպաշտիկ աւանդալէպեր կամ դէպքեր: Ինչպէս կանխաւ ըսուեցաւ Նարեկայ վանքի մէջ կը ցուցուի իր գերեզմանը<sup>38</sup> եւ անոր մօտերը իր աղօթատեղին (Ազգր. Հանդ., 1911, էջ 41): Գրեգորի հետ նոյն վանքին մէջ ապրեցաւ եւ ապա հոն ալ թաղուեցաւ իր Յովհաննէս եղբայրը (հմմտ. եւ Տաշեան, Մայր Յուցակ, էջ 77, 338, 766—767):

Այսպիսի անուանի անձեր ազգին տուող վանք մը դարերով լուսութեան կը մատնուի: Ո գիտէ ի՞նչպիսի ուժեղ հարուածի տակ:

Բայց 1415ին կը գրուի Աւետարան մը՝ «յաստուածարձակ դեաւղս, ուր հանդուցեալ է աստուածընկալ նշխարքս սրբոյն Գրեգորի, որ կոչի Նարեկացի ընդ հովանեաւ սուրբ տաճարին Նարեկացի ընդ հովանեաւ սուրբ տաճարացոյ Լուսոյ մաւր Աստուածածնի... եւ Տարացոյ Լուսոյ մաւր Աստուածարեան, Աղուս-Սանդխտոյ կուսի» (Բարխուդարեան, Աղուս-Նից երկեր եւ զբացիներ, Թիֆլիս 1893, էջ 247):

1417ին Գարոգէլքը՝ «Գրեցաւ ի վանս Նարեկայ ընդ հովանեաւ սրբոյն Վարդանայ զօրավարին» (Նօտարք, էջ 53, ուր ծն. 2 վանքին մասին համառօտ տեղեկութիւն կը արուի):

1419ին կը գրուի ուրիշ աւետարան մը՝ «յաստուածապահ դեաւղս Նարեկ, ուր հանդուցեալ կայ աստուածընդունակ նշխարք սրբոյն Գրեգորի վարդապետին ընդ հովանեաւ սուրբ տաճարացոյ Աստուածածնի եւ նեաւ սուրբ տաճարացոյ Աստուածածնի եւ սուրբ միածնի իւրոյ սուրբ Յարութեան եւ սուրբ միածնի իւրոյ սուրբ Յարութեան եւ սուրբ միածնի իւրոյ սուրբ Յարութեան եւ սուրբ միածնի իւրոյ սուրբ Յարութեան» (Լաւայեանց, սրբոյն Սանդխտոյ կուսին» (Լաւայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 320): Յաջորդ տարին Իգիտ կրօնաւոր կը գրէ ուրիշ աւետարան մը Նարեկ գիւղի մէջ (Լաւայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 326. հմմտ. եւ Նօտարք, էջ 61—62):

Գարձեալ կը տիրէ լուսութիւն, բայց 1574ին կը գրուի Աւետարան մը, որուն անտիպ յիշատակարանը հոս կը գնենք՝ «Աւետարան գրեալ ի վանս Ս. Գրեգորի Չաղարոյց վարդապետի, որ կոչի Նարեկ ձեռագրոյց վարդապետի, որ կոչի Նարեկ ձեռագրոյց վարդապետի ի հայրաձեռամբ Տ. Գրեգոր Եպիսկոպոսի ի հայրապետութեան Տ. Փոքր Գրեգորի ի թՎ. ՌԻԳ

<sup>37</sup> Գալանոսի համեմատ Գր. Նարեկացի Եպիսկոպոս եւ վանքը Եպիսկոպոսանիստ եղած է (հմմտ. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 171, ծն. 2):  
<sup>38</sup> Հմմտ. նաեւ Բիւզանդիոն, 1911, թ. 4366 եւ Տաշեան, Յուց. հայ. Ձեռ. Միթթ. Մատ., էջ 78՝ «Որոյ ձեռքով մարմինն սրբանեալ եղեալ կայ ի նոյն վանս Նարեկայ հուց եկեղեցոյն, որ կառուցեալ է յանուն սրբուհոյն Սանդխտոյ»:

(1574) ի խնդրոյ Դաւիթ տանուտէրի կողակցին Չէթարի... եւ եղին նուէր ի դուռն Ս. Գրեգորի Նարեկացոյն, Ս. Սանդխտոյն եւ սուրբ Յարութեան... յիշեցէք զվարդապետն իմ զմահտեսի Արսէն կրօնաւորն որ ուսոյց մեզ զարուեստ զըջութեան...: Աստուած ողորմի սուրբ ուխտի միաբանիցս՝ Հէրպէտ Յովանէս արեղային որ խնամ տանին եւ լաւ պահեն: Յիշեցէք զԿարապետ կազմողս եւ զուսուցանողս զՏէր Ներսէս Աստուածատուր վարդապետս: Տէր Ներսէս խոստովանութեամբ կատարեցաւ: Յիշեցէք եւ տէր Չաղարի հէրապէտն որ զնեց իւր հալալ վաստակօք...» (Ձեռ. Տարօնոյ, ընդր. Գեղամ էֆէնտի, ի Հաւաք. Յիշատ. Հ. Ակիւնեանի):

Իսկ 1587ին Նարեկի մէջ կը կազմուի Աւետարան մը (Հանդ. Ամս., 1927, էջ 260) եւ ապա մինչեւ ԺԸ. դար լուսութիւն կը տիրէ, երբ 1700ին Թումայ Վանի մէջ գրուած Աւետարան մը կը նուիրէ Նարեկայ (Լաւայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 1026) եւ քանի մը տարի յետոյ՝ 1705ին ուրիշ Աւետարան մը՝ «Դարձեալ յիշեցէք եւ Աստուած ողորմի սացէք վերջին ստացողի սուրբ Աւետարանիս Թումային, որ ստացաւ զսուրբ աւետարանս եւ եղ ի դուռն Չաղարոյց սուրբ Գրեգոր Նարեկացոյն յերկերն Ուսուսեաց, որ այժմ ասի Գաւաչ... յառաջնորդութեան սուրբ ուխտիս Նարեկայն Ղափանցի Մինաս վարդապետին...: Գրեցաւ թՎին ՌՃԾԳ (1705)... Յիշեցէք... զԳուլօնց Մուրատն եւ զԿողակցին իւր... որ զչամանի կորթն արարին յիսթ ի վերայ Նարեկայ վանից... թուին ՌՃԾԹ (1710, Լաւայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 799—802):

Մինաս Ղափանցին շինարար<sup>39</sup> եղած է իրեն մասնակցեր է Յովհաննէս (հմմտ. վերը). որ 1707ին «վանից հայր» կ'ըլլայ:

Յաջորդ շրջաններուն Նարեկայ առաջնորդութիւնը կը ստանձնեն՝ Բարսեղ արքեպիսկոպոս (Դիւան, Է., էջ 508), Յարութիւն Տարօնեցի (հմմտ. առջեւ), Մկրտիչ վարդապետ (Նօտարք, էջ 226, Ազգր. Հանդ., 1911, էջ 74), Յովսէփ վարդապետ, որ վանքը կը բարեկարգէ (Մասիս, 1858, Է. տարի, թ. 336) եւ Աղթամարի աղետալի անցքերը գրի կ'առնու (հմմտ. Տեղեկագիր աղետալի անցից եւ

<sup>39</sup> Մինաս Նարեկայ վանքը նորոգել է՝ «Ի սոյն ամի ՌՃԾԶ... շինեցաւ Նարեկայ վանք ձեռամբ Մինաս վարդապետին» (Սրուանձտեանց, Մանանայ, էջ 361):

